# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**գ. Լոռի Բերդ** **« 19 » հունիսի 2026թ.**

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 7

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026թ. ութերորդ նստաշրջանի՝ հունիսի 19-ին, ժամը՝ 12:00-ին հրավիրված հերթական նիստը:

Նիստը ուղիղ հեռարձակվում է համայնքապետարանի ֆեյսբուքյան էջով, քանի որ համայնքապետարանի յութուբյան ալիքի հետ առաջացել է տեխնիկական խնդիր:

Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու տասնչորս անդամները, բացակա էր՝ Անի Սերոբյանը:

**Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանը:**

**Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:**

Համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղ էին գտել հետևյալ հարցերը.

**Լսեցին՝**

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ՝ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Զեկ./Արայիկ Ներսիսյան/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ և 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերով՝

**Ավագանին որոշեց՝** հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026 թվականի ութերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ հունիսի 19-ի նիստի օրակարգը՝ համաձայն ստորև ներկայացված տեսքի.

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026 թվականի ութերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ հունիսի 19-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի շրջանավարտներին վերջին զանգի կապակցությամբ Լոռի Բերդ համայնքի բյուջեից գումար տրամադրելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մրցութային կարգով 25 տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին:

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի բյուջեում հետևյալ փոփոխություններ կատարելու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2027-2029թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026 թվականի իններորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

**14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33-Ա/

**Լսեցին՝**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Զեկ./Անի Մարտիրոսյան/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի7-րդև 42 կետերով, Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. ապրիլի 11-ի 25-Ա որոշմամբ, ինչպես նաև հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Ավագանին որոշեց՝** Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» ծրագրի 08 բաժնի 02 խմբի 04 դասի 4727 հոդվածով նախատեսված գումարից համայնքի հանրակրթական դպրոցների շրջանավարտներին յուրաքանչյուրին տրամադրել՝ 10.000-ական ՀՀ դրամ:

**14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34-Ա

**Լսեցին՝**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ 25 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Զեկ./Անի Մարտիրոսյան/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի և 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ և 76-րդ հոդվածներով, ինչպես նաև հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի ավագանու իրավական, քաղաքաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսության հարցերի մշտական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 12-ի թիվ 4 արձանագրությամբ (դրական եզրակացություն) հաստատված արդյունքները՝

**Ավագանին որոշեց՝** Տալ հավանություն ստորև ներկայացված համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողամասերը մրցութային կարգով 25 տարի ժամկետով վարձակալության տրամադրելուն Լոռի Բերդ համայնքի բյուջեի նկատմամբ պարտքեր չունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց.

**1)** Լոռի Բերդ համայնքի Բովաձոր բնակավայրում գտնվող 06-025-0112-0010 կադաստրային ծածկագրով, 3.55448 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր գործառնական նշանակության, երրորդ կարգ. հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 72.000 ՀՀ դրամ:

**2)** Լոռի Բերդ համայնքի Բովաձոր բնակավայրում գտնվող 06-025-0119-0001 կադաստրային ծածկագրով, 1.12218 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր գործառնական նշանակության, երրորդ կարգ. հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 23.000 ՀՀ դրամ:

**3)** Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրում գտնվող 06-056-0101-0047 կադաստրային ծածկագրով, 0.98302 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր գործառնական նշանակության, չորրորդ կարգ. հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 20.000 ՀՀ դրամ:

**4)** Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրում գտնվող 06-056-0101-0048 կադաստրային ծածկագրով, 0.61838 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային

շանակության, արոտավայր գործառնական նշանակության, չորրորդ կարգ. հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 13.000 ՀՀ դրամ:

**5)** Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրում գտնվող 06-056-0101-0049 կադաստրային ծածկագրով, 0.86677 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր գործառնական նշանակության, չորրորդ կարգ. հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 18.000 ՀՀ դրամ:

**6)** Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրում գտնվող 06-056-0101-0050 կադաստրային ծածկագրով, 1.01471 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր գործառնական նշանակության, չորրորդ կարգ. հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 21.000 ՀՀ դրամ:

**7)** Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրում գտնվող 06-056-0112-0001 կադաստրային ծածկագրով, 0.74945 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության, առաջին կարգ. հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 15.000 ՀՀ դրամ:

**8)** Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրում գտնվող 06-056-0130-0060 կադաստրային ծածկագրով, 0.74133 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության, չորրորդ կարգ. հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 15.000 ՀՀ դրամ:

**9)** Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրում գտնվող 06-044-0214-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված, 0.32024 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, խետհարք գործառնական նշանակության, հինգերորդ կարգ. հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 7.000 ՀՀ դրամ:

Չափագրման, վկայականների ձեռքբերման և նոտարական վավերացման ծախսերը փոխհատուցվելու են վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված անձի կողմից:

**14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35-Ա

**Լսեցին՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Զեկ./Մարգարիտա Հովսեփյան/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով՝

**Ավագանին որոշեց՝** կատարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի բյուջեում հետևյալ փոփոխությունները համաձայն՝ հավելվածի:

**14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36-Ն

Հավելվածը կցվում է:

**Լսեցին՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Զեկ./Մարգարիտա Հովսեփյան/**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1 հոդվածով՝

**Ավագանին որոշեց՝** հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2027-2029թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը համաձայն՝ հավելվածի:

**14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37-Լ

Հավելվածը կցվում է:

**Լսեցին՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Զեկ./Անի Մարտիրոսյան/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 18-րդ հոդվածի 24-րդ կետերով՝

**Ավագանին որոշեց՝** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը սահմանել՝ 2026 թվականի սեպտեմբերի 15-ը, ժամը՝ 12:00-ն:

**14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 38-Ա/

***Նիստի փակում:***

Ավագանու անդամներ՝

Ներսիսյան Արայիկ Մենժիկի

Խալաթյան Ավետիք Հարությունի

Շահնազարյան Թամարա Էդիկի

Պապյան Հարություն Միշիկի

Պապիկյան Վահրամ Ռոմիկի

Չիբուխչյան Արման Հրաչիկի

Չատինյան Վանո Վալերի

Ներսեսյան Իրինա Վազգենի

Սիմոնյան Անահիտ Բաբկենի

Մարգարյան Սիլվա Ստեփանի

Վերմիշյան Կարլեն Ջիվանի

Գրիգորյան Աննա Հրայրի

Ասրյան Աննա Տիգրանի

Գևորգյան Միշիկ Մարտիկի

Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝

Արայիկ Ներսիսյան _____

*Նիստը արձանագրեց՝* Անի Մարտիրոսյանը _____

Կ.Տ.